ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի, Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի և Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի միասնական խորհրդի նիստի

(հերթական նիստը կայացել է 2026 թվականի մայիսի 29–ին)։

Նիստին մասնակցում են խորհրդի 9-ը անդամներից 9-ը, որից 4-ը հեռավար։

Նիստին, խորհրդակցական ձայնի իրավունքով, մասնակցում են Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի տնօրեն Ա. Սարգսյանը և գլխավոր հաշվապահ Ն. Ասլանյանը, Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի տնօրենի պարտականությունները կատարող Զ. Վարդանյանը, վարչատնտեսական համակարգող Կ. Մուսաելյանը և գլխավոր հաշվապահ Հ. Խաչատրյանը, Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի տնօրեն Ն. Մեհրաբյանը։

Օրակարգում՝

1.1 Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ II կիսամյակում կատարված աշխատանքների։ /Զեկուցող՝ Զ. Վարդանյան/

1.2 Հաստատության բյուջեի 2026 թվականի եկամուտների և ծախսերի առաջին եռամսյակի (հունվար, փետրվար, մարտ ամիսների և մինչև ապրիլի 9-ը ընկած ժամանակահատվածը) հաշվետվություն։ /Զեկուցող Կ. Մուսաելյան/

2.1 Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ II կիսամյակում կատարված աշխատանքների։ /Զեկուցող՝ Ա.Սարգսյան/

2.2 Հաստատության բյուջեի 2026 թվականի եկամուտների և ծախսերի առաջին եռամսյակի (հունվար, փետրվար, մարտ ամիսների) հաշվետվություն։ /Զեկուցող Ն. Ասլանյան/

3. Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ II կիսամյակում կատարված աշխատանքների։ /Զեկուցող Ն. Մեհրաբյան/

Լսեցին՝ 1 (1.1 Պ. Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ II կիսամյակում կատարված աշխատանքների մասին։ /Զեկուցող՝ Զ. Վարդանյան/)

1.1 Զեկուցող Զ. Վարդանյանը բանավոր կարգով, ներկայացրեց Պ. Չայկովսկու անվան միջնակարգ երաժշտական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ II կիսամյակում կատարված աշխատանքները, նշեց հաստատության նվագախմբի ելույթի, շրջագայությունների մասին և բոլոր փաստաթղթերը տեղադրեց խորհրդի հաղորդագրությունների հարթակում: Ինչպես նաև հավելեց, որ հաշվետվության մեջ ներառված են հաստատության բոլոր օղակների ղեկավարների, գրադարանավարի և հոգեբանի հաշվետվությունը:

Արտահայտվեցին-1 Հաստատության վարչատնտեսական համակարգող Կ. Մուսայելյանը:

Նա նշեց, որ 2026թվականի ապրիլի 9-ից Պ. Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտացված դպրոցը անցել է նոր կառավարման համակարգի, որով էլ պայմանավորված իրենց ֆինանսատնտեսական գործունեության հաշվետվությունը կներկայացնի գլխավոր հաշվապահ Հ. Խաչատրյանը՝ մինչև ապրիլի 9-ը:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին մանկավարժական խորհրդի 2026թ. համապատասխան որոշումը և զեկուցողի ներկայացրած հաշվետվությունը, կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.1 Հավանության արժանացնել ներկայացված հաշվետվությունները:

1.2 Հաստատության բյուջեի 2026 թվականի եկամուտների և ծախսերի առաջին եռամսյակի (հունվար, փետրվար, մարտ ամիսների և մինչև ապրիլի 9-ը ընկած ժամանակահատվածը) հաշվետվության մասին։ /Զեկուցող Կ. Մուսաելյան/)

1.2 Զեկուցող Հ. Խաչատրյանը ներկյացրեց Պ. Չայկովսկու անվան երաժշտական մասնագիտացված դպրոցի 2026 թվականի առաջին եռամսյակի և մինչև ապրիլի 9-ը ընկած ժամանակահատվածը ֆինանսատնտեսական գործունեության կատարողականը և բոլոր փաստաթղթերը տեղադրեց խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի, 7-րդ ենթակետի և/կամ 8-րդ ենթակետի պահանջներով, կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է

1.2 Հավանության արժանացնել ներկայացրած հաշվետվությունը:

Լսեցին՝ 2.1 (3. Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ II կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվության մասին: /Զեկուցող՝ Ա. Սարգսյան/

Զեկուցողը կառավարման խորհրդին ներկայացրեց 2025-2026 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի /պլանի/ II կիսամյակում կատարված աշխատանքների հաշվետվության մասին, Ա. Սարգսյանը նշեց այն մասին, որ, պայմանավորված 12-րդ դասարանում ժամաբաշխումով ձևավորվել է նոր պլան: Նա նեշեց կատարված բոլոր աշխատանքների մասին սովորողներին այլ երկրներ ունեցած այցերի, օլիմպիադաների մասնակցությունների հաղթանակների և ձեռքբերումների մասին, տարբեր՝ ՀՀ և արտասահմանյան բուհերի ներկայացուցիչների հետ հանդիպումներ

Ֆրանկոֆոնյայի միջոցառումը

«Դասը վարում է Սարգիս Ստեփանյանը» հանդիպում կենդանի լեգենդ մերօրյա օրինակ հերոսի հետ:

Համերգային միջոցառում և մրցանակաբաշխություն « բացահայտում ենք մեր շնորհալիներին» և այլն,ինչպես նաև հավելեց, որ բոլոր փաստաթղթերը տեղադրվել է խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին մանկավարժական խորհրդի 2026թվականի համապատասխան որոշումը և Ա. Սարգսյանի ներկայացրած հաշվետվությունները, կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

2.1 Հավանության արժանացնել ներկայացված հաշվետվությունները:

2.2 Հաստատության բյուջեի 2026 թվականի եկամուտների և ծախսերի առաջին եռամսյակի հաշվետվության մասին/ Զեկուցող Ն. Ասլանյան/)

Զեկուցող Ն. Ասլանյանը խորհրդի անդամներին ներկայացրեց Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի 2026 թվականի ֆինանսատնտեսական գործունեության I եռամսյակի հաշվետվությունը, նշեց որ այն ամենայն մանրամասնությամբ ու բացված տողերով տեղադրվել է խորհրդի հաղորդագրությունների հարթակում:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–ին կետի, 7-րդ ենթակետի և/կամ 8-րդ ենթակետի պահանջներով, կառավարման խորհուրդը՝

ՈՐՈՇՈՒՄ Է.

2.2 Հավանության արժանացնել Ա. Շահինյանի անվան ֆիզիկամաթեմատիկական մասնագիտացված դպրոցի գլխավոր հաշվապահի կողմից ներկայացված հաստատության 2026 թվականի ֆինանսատնտեսական գործունեության I եռամսյակի հաշվետվությունը:

Լսեցին՝ 3

(Երևանի երաժշտական թիվ 13 մասնագիտացված դպրոցի 2025-2026 ուստարվա ուսունադաստիարակչական աշխատանքների տարեկան ծրագրի (պլանի) II կիսամյակում կատարված աշխատանքների (զեկուցող՝ Ն. Մեհրաբյան):

Զեկուցող Ն. Մեհրաբյանը կառավարման խորհրդի անդամներին ներկայացրեց վերոնշյալ հաշվետվությունը, հավելեց, որ պահանջներից բխած յուրաքանչյուր երկու ամիսը մեկ վերադասին ներկայացվում է ուսումնադաստիարակչական աշխատաների կատարողականը, ինչպես նաև այն տեղադրվում է համապատասխան հարթակներում: Ն. Մեհրաբյանը նշեց երկրորդ կիսամյակում կատարված բոլոր միջոցառումների, վարպետաց դասերի այդ թվում նաև տարեվերջյան խոշորագույն միջոցառումների՝ դպրոցի նվագախմբի Գյումրի այցելության, Կոմիտասյան մոտիվներով համադպրոցական համագործակցային միջոցառման, «Անվտանգ և ապահով կրթական միջավայր» խորագրով համադպրոցական միջոցառման մասին և հավելեց ՈՒԴԱՏՊ-ում չներառված նաև մեկ կարևոր միջոցառման՝ Հայ երգչախմբային արվեստի մեծանուն վարպետ ՀՀ ժողովրդական արտիստ, ազգային հերոս Հովհաննես Չեքիջյանի հյուրընկալության մասին:

Առաջնորդվելով «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 11–րդ հոդվածի 1–րդ կետի 3-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով 2025-2026 ուսումնական տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին մանկավարժական խորհրդի 03.04.2026թ.-ի թիվ 9 նիստի 1 որոշումը և տնօրեն Ն. Մեհրաբյանի կողմից ներկայացված հաշվետվությունները, կառավարման խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է.

Հավանության արժանացնել տնօրեն Ն. Մեհրաբյանի կողմից ներկայացված հաշվետվությունները: